Ութերորդ հաղորդում

Աճել առ սուրբ տաճար Տիրոջ մեջ

Գրվածքների ընթերցում. Եփս 2:5-6, 8, 18-22, 3:4-5, Ա Կրթ 3:16-17, 6:17

I. Մեր՝ շնորհքով փրկվելը, միասին հարուցանվելը Քրիստոսի հետ ու միասին նստեցվելը Նրա հետ երկնային ոլորտներում, ինչպես նաև առ Հայրը մուտքի իրավունք ունենալը եկեղեցին՝ Նրա Մարմինը, կառուցելու համար է այն բանի միջոցով, որ աճում ենք սուրբ տաճար լինելու Տիրոջ մեջ՝ Եփս 2:5-6, 8, 18, 21-22.

Ա. Աստված մեզ բոլորիս միասին կենդանացրեց, երբ Նա կենդանացրեց խաչված Հիսուսին. ուստի Նա մեզ միասին կենդանարարեց Քրիստոսի հետ՝ խ. 5:

Բ. Շնորհքով մենք փրկվել ենք մեր մահվան խղճալի վիճակից և կյանքի սքանչելի ոլորտը բերվել՝ խ. 5:

Գ. Որդի Աստծու միջոցով, ով Իրագործողն է, միջոցը, և Հոգի Աստծու մեջ, ով Գործադրողն է, կիրառումը, մենք մուտքի իրավունք ունենք առ Հայր Աստված, ով Սկզբնավորողն է, եզակի ակունքը՝ խ. 18.

1. Դիրքի առումով՝ մենք հաշտեցվել ենք Աստծու հետ. ապրումների առումով՝ առ Հայրը մուտքի իրավունք ունենք՝ խխ. 16, 18.
   - ա. Աստծու հետ հաշտեցվելը փրկվելն է. առ Հայրը մուտքի իրավունք ունենալը Աստծուն վայելելն է:
   - բ. Երբ շփվում ենք Աստծու հետ, Նրա մոտ ենք գալիս Քրիստոսի միջոցով Հոգու մեջ առ Հայրը. սա Եռամեկ Աստված է մեր փորձառության մեջ և մեր վայելքի համար՝ խ. 18:
2. Հայրը մեզ մոտ եկավ Որդու միջոցով Հոգու մեջ, և այժմ Հոգին մեզ վերադարձնում է Հոր մոտ Որդու միջոցով. այս սքանչելի երկկողմանի երթևեկի միջոցով մենք վայելում ենք Եռամեկ Աստծու բաշխումը՝ Բ Կրթ 13:14, Եփս 3:16-17ա:
3. Որդու միջոցով նշանակում է Եռամեկ Աստծու միջոցով, Հոգու մեջ նշանակում է Եռամեկ Աստծու մեջ, իսկ առ Հայրը նշանակում է առ Եռամեկ Աստված. մենք այսպես ենք փորձառաբար ապրում Եռամեկ Աստծուն և հենց այսպես կարող ենք կառուցվել՝ 2:18, 21-22:

II. Որպես Քրիստոսին հավատացողներ և որպես Քրիստոսի Մարմնի անդամներ՝ մենք կառուցվում ենք «առաքյալների ու մարգարեների հիմքի վրա.... ընդ որում անկյունաքարը Քրիստոս Հիսուսն Ինքն է»՝ խ. 20.

Ա. Քանի որ Քրիստոսի խորհուրդը՝ եկեղեցին, բացահայտվել էր առաքյալներին, նրանց ստացած հայտնությունն այն հիմքն է համարվում, որի վրա կառուցվում է եկեղեցին՝ 3:4-5, 2:20.

1. Սա համապատասխանում է Մտթ 16:18-ի վեմին, որը ոչ միայն Քրիստոսն Ինքն է, այլև Նրան վերաբերող հայտնությունը, որի վրա Նա Իր եկեղեցին է կառուցելու:

2. Մենք պետք է եկեղեցին կառուցենք առաքյալների և մարգարեների վրա՝ Եփս 2:20:

Բ. Եփս 2:20-ում Քրիստոսը կոչվում է անկյունաքար.

1. Քրիստոսը՝ որպես անկյունաքար, միացնում է հրեա հավատացյալներին և հեթանոս հավատացյալներին՝ սուրբ տաճար լինելու Տիրոջ մեջ՝ Սղմ 118:22-26, Եփս 2:20-22:
2. Քրիստոսը՝ անկյունաքարը, եկեղեցին նորկտակարանյան դարաշրջանում կառուցելու համար է՝ Մտթ 16:18, Եփս 2:20-22, Ա Պտ 2:5.
   ա. Եկեղեցին՝ որպես Աստծու տաճարը, կառուցելու համար մենք պետք է փորձառաբար ապրենք Քրիստոսին՝ որպես անկյունաքարի՝ խխ. 6-7:
   բ. Քրիստոսի՝ որպես անկյունաքարի մեջ ամբողջ կառույցը աճում է՝ սուրբ տաճար լինելու Տիրոջ մեջ՝ Եփս 2:20-22:
3. Աստծու նորկտակարանյան տնտեսության մեջ Քրիստոսը՝ որպես անկյունաքար, մեզ փրկելով (Գրծ 4:10-12), մեզ նախ՝ կենդանի քարեր է դարձնում Աստծու հոգևոր տունը կառուցելու համար (Մտթ 16:18, Հվի 1:42, Ա Պտ 2:4-7), այնուհետև, մեզ փոխակերպելով (Հռմ 12:2ա, Բ Կրթ 3:18), մեզ կառուցում է Աստծու բնակատեղ լինելու (Եփս 2:19-22), որպեսզի իրագործի Աստծու հավիտենական տնտեսությունը Աստծու բարեհաճության համար (1:9, 3:9-11):

III. Քրիստոսի մեջ, ով անկյունաքարն է, «ամբողջ կառույցը հարմարակցվելով աճում է՝ սուրբ տաճար լինելու Տիրոջ մեջ»՝ 2:21.

Ա. «Ամբողջ կառույցը» արտահայտությունը ցույց է տալիս տիեզերական կառույցը՝ եկեղեցին ամբողջ տիեզերքում՝ խ. 21:

Բ. «Հարմարակցվելով» բառը նշանակում է «կառույցի պայմանին ու վիճակին համապատասխանեցվելով»՝ խ. 21.

1. «Հարմարակցվելը» ենթադրում է, որ Մարմնի շրջանակի բոլոր մասերը հարմարակցվում են՝ ձևավորելով մեկ կառուցվածք՝ 4:16:
2. Կառույցի մեջ բոլոր նյութերը հարմարակցվում են իրար. դա ոչ թե սոսկ կիտվելն է, այլ կառուցվելը՝ 2:21:

Գ. Քանի որ կառույցը կենդանի է, այն աճում է, որովհետև օրգանական է՝ Ա Պտ 2:5.

1. Այս կառույցն աճում է՝ սուրբ տաճար՝ Աստծու սուրբ բնակատեղ լինելու. սա ցույց է տալիս, որ սուրբ տաճարը կենդանի կառույց է՝ Եփս 2:21:
2. Առաջին հայացքից՝ աճն ու կառույցը առանձին գործընթացներ են, իրականում տան կառույցը Մարմնի աճն է՝ 4:15-16:
3. Եկեղեցու՝ որպես տաճարի, Աստծու տան, կառույցը տեղի է ունենում հավատացյալների՝ կյանքում աճելու շնորհիվ՝ Ա Կրթ 3:6-7, Եփս 4:15-16, Կոս 2:19, Ա Պտ 2:2:
4. Մարմինն աճում է Աստծու աճով՝ Կոս 2:19.
   ա. Մարմնի աճը կախված է մեր ներսում Աստծու աճից, Աստծու ավելացումից, Աստծու մեծացումից՝ Եփս 4:16:

բ. Աստված մեզ աճ է տալիս՝ Իրեն մեզ սուբյեկտիվորեն տալով՝ 3:16-17ա.
   1) Այն, որ Աստված մեզ աճ է տալիս, իրականում նշանակում է, որ Նա մեզ հենց Իրեն է տալիս՝ Ա Կրթ 3:6-7:
   2) Որքան շատ է Աստված ավելանում մեր մեջ, այնքան շատ աճ է Նա մեզ տալիս՝ Եփս 4:15-16:

5. Եկեղեցին աճում է կյանքի բաշխման՝ Աստվածային Երրորդության աստվածային բաշխման շնորհիվ՝ Բ Կրթ 13:14.
   ա. Եռյակ Աստված՝ Հայր Աստված, Որդին և Հոգին, Իրեն բաշխում է մեր մեջ որպես կյանքի և որպես մեր կենսամատակարարման՝ Եփս 3:16-17:
   բ. Մինչ պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստված Իրեն բաշխում է մեր մեջ որպես կյանքի, մենք սնուցվում ու աճում ենք՝ 4:15-16:
   գ. Եկեղեցիներում մենք պետք է հոգանք աստվածային կյանքի բաշխման միջոցով իսկական աճի համար՝ Ա Կրթ 3:6-7, Բ Պտ 1:5-7:

Դ. Ամբողջ կառույցը սուրբ է դառնում՝ Եփս 2:21.
1. Աստված մեզ սուրբ է դարձնում՝ Իրեն՝ Սրբին, ներդնելով մեր էության մեջ, որպեսզի մեր ողջ էությունը ներթափանցվի ու հագենա Իր սուրբ բնությամբ՝ 1:4, Ա Թսղ 5:23:
2. Մեզ՝ Աստծու ընտրյալներիս համար սուրբ լինել նշանակում է հաղորդ լինել Աստծու աստվածային բնությանը և թույլ տալ, որ Աստված Իրենով հագեցնի մեր ողջ էությունը. մեր էությունը սուրբ է դառնում այն իմաստով, որ ունենում է Աստծու բնությունն ու որակն այնպես, ինչպես Աստված Ինքը՝ Բ Պտ 1:4, Եփս 5:27, Կղս 1:22:

Ե. Ամբողջ կառույցը աճում է՝ սուրբ տաճար լինելու Տիրոջ մեջ՝ Եփս 2:21.
1. 21-րդ խոսքում որպես «տաճար» թարգմանված հունարեն բառը նշանակում է «սրբարան», «տաճարի ներքին մասը»:
2. Եկեղեցին Աստծու տաճարն է. որպես այդպիսին՝ այն սուրբ Աստծու սրբարանն է՝ տաճարը, որտեղ բնակվում է Աստծու Հոգին՝ Ա Կրթ 3:16-17.
   ա. 16-րդ խոսքի «Աստծու տաճար»-ը վերաբերում է հավատացյալների ընդհանրությանը որոշակի տեղանքում, մինչդեռ 17-րդ խոսքի «Աստծու տաճար»-ը վերաբերում է բոլոր հավատացյալներին՝ տիեզերականորեն:
   բ. Աստծու եզակի հոգևոր տաճարը, որ տիեզերքում է, երկրի վրա բազմաթիվ տեղանքներում իր արտահայտությունն ունի. յուրաքանչյուր արտահայտություն Աստծու տաճարն է տվյալ տեղանքում՝ Եփս 2:21-22:
3. Նոր Երուսաղեմում տաճար չկա, որովհետև նրա տաճարը Տեր Աստված Ամենակարողն է և Գառը՝ Հյտ 21:22.

ա. Սուրբ Երուսաղեմ քաղաքն ամբողջությամբ Սրբությունների Սրբություն է լինելու. ուստի նրա մեջ տաճար չի լինելու՝ խ. 16:
բ. Այդ ներքին տաճարը Տեր Աստված Ամենակարողն է և Գառը՝ խ. 22:

4. Աստծու տան ողջ կառույցը՝ Նրա սրբարանը, Քրիստոս-Տիրոջ մեջ է՝ Եփս 2:21:

IV. Դիմելով Եփեսոսում եղող տեղական սրբերին՝ Պողոսն ասում է. «Ում մեջ դուք էլ համակառուցվում եք՝ հոգում Աստծու բնակատեղ լինելու»՝ խ. 22.

Ա. Տաճարն ու բնակատեղը վերաբերում են միևնույն բանի երկու տեսանկյանը՝ խխ. 21-22.
1. Տաճարն այն վայրն է, որտեղ Աստծու մարդիկ շփվում են Աստծու հետ, երկրպագում են Աստծուն և լսում Նրա խոսքերը՝ խ. 21:
2. Աստծու բնակատեղը հանգստի վայր է. Աստված հանգստանում է Իր բնակատեղում՝ խ. 22:
3. Տաճարն ու բնակատեղը երկու առանձին վայրեր չեն. դրանք միևնույն կառույցի երկու տեսանկյունն են, երկու գործառույթը կամ երկու գործածումները:

Բ. 22-րդ խոսքում «էլ» բառը ցույց է տալիս, որ 21-րդ խոսքի կառույցը տիեզերական է, իսկ 22-րդ խոսքի կառույցը՝ տեղական.
1. Համատեքստի համաձայն՝ 21-րդ խոսքի տաճարը տիեզերական կառույց է, իսկ 22-րդ խոսքի Աստծու բնակատեղը՝ տեղական:
2. Տիեզերական առումով՝ եկեղեցին եզակիորեն մեկն է և աճում է տիեզերականորեն. տեղական առումով՝ եկեղեցին որոշակի տեղանքում նույնպես մեկն է, և այդտեղի սրբերը համակառուցվում են իրենց որոշակի տեղանքում՝ խխ. 21-22, Ա Կրթ 1:2, 3:16-17:

Գ. Աստծու բնակատեղը մեր հոգում է՝ Եփս 2:22.
1. 21-րդ խոսքն ասում է, որ սուրբ տաճարը Տիրոջ մեջ է, իսկ 22-րդ խոսքն ասում է, որ Աստծու բնակատեղը հոգում է:
2. Սա ցույց է տալիս, որ Աստծու բնակատեղի կառուցման համար Տերը մեկ է մեր հոգու հետ, իսկ մեր հոգին մեկ է Տիրոջ հետ՝ Ա Կրթ 6:17:
3. Հենց մեր հոգում է կատարվում եկեղեցու՝ Աստծու բնակատեղի կառուցումը:

© 2022 Living Stream Ministry